ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՅՑԵԼԵՑ ԱԲՈՎՅԱՆԻ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԿԱԼԱՆԱՎԱՅՐ

Մարտի 27-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Աբովյանի կանանց և անչափահասների կալանավայր՝ Մեծի Պահոց շրջանում Քրիստոսի Հարության խորհրդով մխիթարություն բերելու ազատազրկման մեջ գտնվող կանանց և անչափահասներին:

Այցի ընթացքում քրեակատարողական վարչության պետ Ս. Հովհաննիսյանը և կալանավայրի պետ Ց. Ջամալյանը Նորին Սրբությանը ներկայացրեցին կալանավայրի խնդիրներն ու առօրյան, որից հետո Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ ազատազրկվածների հետ և իր պատգամը ուղղեց նրանց:

«Աստված ամենուր մեզ հետ է, Աստված հավասարապես սիրում է ամենքիս, և դեպի Աստված դարձի ճանապարհը բոլորիս առջև բաց է: Պարզապես պետք է կարողանանք ինքներս մեր մեջ գտնել արիությունը այդ ճանապարհը տեսնելու, տեսնելու մեր կյանքի մեջ Լույսը և առաջնորդվելու դեպի այդ Լույսը՝ թողնելով մեր հետևում և՛ խավար, և՛ բոլոր տեսակի այն մտածումներն ու զգացումները, որոնք հեռացնում են մեզ Աստծուց», ասաց Նորին Սրբությունը:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայ Եկեղեցին մշտապես հիշում է իր բոլոր զավակներին՝ հայցելով Տիրոջ օգնականությունը, սերը և ողորմությունը, որպեսզի ամենքին առաջնորդի կյանքի շիտակ ճանապարհով:

Հանդիպման ավարտին ազատազրկվածները ներկայացրեցին գեղարվեստական հայտագիր, ապա Նորին Սրբությունը առանձին զրույց ունեցավ նրանց հետ:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը և ՀՀ զինված ուժերի հոգևոր տեսուչ Տ. Արշեն աբեղա Սանոսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ